ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_ _ սեպտեմբերի 2025 թվականի № -Ա

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2025 թվականի հուլիսի 3-ին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է դիմել Կոտայքի մարզի Սարալանջ գյուղի բնակիչ Վարդան Հակոբջանյանը և հայտնել Սարալանջ գյուղում «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ջրամատակարարման գրաֆիկի խախտման մասին: Մասնավորապես դիմումատուն հայտնել է, որ Ընկերության կողմից օրեր շարունակ ջուր չի մատակարարվում, գյուղում մեկ ժամից ավելի ջրամատակարարում չի իրականացվում, ինչի մասին արդեն երկու տարի շարունակ ահազանգել է Ընկերությանը,

բ) Հանձնաժողովը, Վարդան Հակոբջանյանի կողմից ներկայացված դիմումի առնչությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով, 2025 թվականի հուլիսի 4-ի №ԱՆ/34.4-Մ2-11/3208-2025 գրությամբ դիմել է Ընկերությանը,

գ) ՀՀ Կոտայքի մարզի Սարալանջ գյուղի 1-ին փողոցի 2-րդ փակուղու №4 հասցեի ջրամատակարարման հրապարակված գրաֆիկի խախտման վերաբերյալ Վարդան Հակոբջանյանից ստացված դիմում-բողոքի ընթացքն ապահովելու համար սույն թվականի հուլիսի 8-ին Հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի աշխատակիցների հետ համատեղ ուսումնասիրության նպատակով կատարված այցի շրջանակներում պարզվել է, որ բնակավայրում ջրամատակարարումն իրականացվում է ըստ փողոցների՝ 4 ժամվա ընթացքում, յուրաքանչյուրը՝ 1 ժամով, արդյունքում բնակավայրի ջրամատակարարումն իրականացվում է 1 ժամյա գրաֆիկով,

դ) Ի պատասխան Հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 4-ի №ԱՆ/34.4-Մ2-11/3208-2025 գրության՝ Ընկերությունը 2025 թվականի հուլիսի 14-ի №ՄՇ/24305 գրությամբ հայտնել է, որ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Սարալանջ և Արագյուղ բնակավայրերը սպասարկող d=100մմ ջրագիծն անցնում է Բուժական գյուղի տարածքով, որի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը ներառված չեն Կառավարության №1662-Ա որոշմամբ ընդունված գույքի ցանկում և Ընկերության կողմից այդ բնակավայրում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ չեն մատուցվում: Միաժամանակ, բարձրացված խնդրի առնչությամբ, որպես փաստարկ Ընկերությունը հայտնել է, որ Սարալանջ և Արագյուղ բնակավայրերը սնող՝ Ընկերության կողմից շահագործվող d=100մմ ջրագծից d=63մմ տրամագծի խողովակով ապօրինի միացում է կատարվել և ջուր է մղվում դեպի Բուժական բնակավայր: Ընկերությունը տեղեկացրել է նաև, որ նշված հարցի լուծման նպատակով հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել և Կոտայքի մարզային քննչական վարչության Նաիրիի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, ինչպես նաև 2017 թվականի հունիսի 1-ի №658-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ արձանագրված խախտման համար հաշվարկել է վճարման ենթակա 6 773 537 դրամ գումար:

ե) Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 136-րդ կետի համաձայն՝ հրապարակված ջրամատակարարման գրաֆիկը պետք է ներառի բաժանորդին ջրամատակարարմամբ ապահովելու երաշխավորված ժամանակահատվածը, մինչև 17 ժամ տևողությամբ ջրամատակարարում ունեցող բաժանորդի ջրամատակարարումը պետք է իրականացվի ժամը 7^{00}-24^{00}-ն ընկած ժամանակահատվածում,

զ) Կանոնների 134-րդ կետի համաձայն՝ մատակարարը պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ՝ նոյեմբեր ամսվա վերջին տասնօրյակում, իր պաշտոնական կայքում հրապարակել բաժանորդի հաջորդ տարվա ջրամատակարարման գրաֆիկը, ինչպես նաև գրաֆիկի հրապարակված և Կանոնների 137-րդ կետով սահմանված կարգով բաժանորդի իրազեկված լինելու մասին գրավոր ծանուցել Հանձնաժողովին,

է) Ընկերության կողմից իր պաշտոնական կայքում հրապարակված՝ 2025 թվականի ջրամատակարարման գրաֆիկի համաձայն՝ Կոտայքի մարզի Սարալանջի գյուղի ջրամատակարարման տևողությունը 4 ժամ է, ժամանակահատվածը՝ 08:00-12:00,

ը) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 6-րդ մասը, Կանոնների 136-րդ կետով սահմանված պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ 2025 թվականի օգոստոսի 21-ին հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2025 թվականի օգոստոսի 21-ի №ՄՄ/34.4-Մ2-14/4481-2025 գրությամբ: Նույն գրությամբ Ընկերությունը տեղեկացվել է նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքն ապահովելու նպատակով, գրությունը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում վարույթում քննարկվող հարցերի վերաբերյալ դիրքորոշում և համապատասխան հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին:

թ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2025 թվականի սեպտեմբերի 21-ի №ՄՇ/31772 գրությամբ հայտնել է, որ ջրամատակարարման գրաֆիկի շեղումները պայմանավորված են եղել ջրի սպառման ծավալների կտրուկ աճով, խմելու ջուրը ոռոգման նպատակով օգտագործելու դեպքերի և ջրաղբյուրներում ջրատվության նվազման հետ, որտեղ Ընկերության համապատասխան տեղամասի աշխատակիցների կողմից կատարվել են անհրաժեշտ կարգավորումներ՝ ժամային երաշխավորված գրաֆիկն ապահովելու ուղղությամբ և ներկայումս Սարալանջ բնակավայրի ջրամատակարարումը կարգավորված է և ստիպված չեն լինի կրկին վերադառնալ այս խնդրին և ըստ էության ընդունել է, որ խախտվել է Կանոնների 136-րդ կետով սահմանված պահանջը, սակայն առաջարկել է ձեռնպահ մնալ Ընկերության նկատմամբ պատժամիջոցների կիրառումից, քանի որ մինչև խնդրի գլոբալ լուծումը՝ Ընկերությունը ձեռնարկում է հնարավոր բոլոր միջոցները նման եղանակային և հարակից խոչընդոտների պայմաններում սպառողներին ամենօրյա ջրամատակարարում իրականացնելու համար,

ժ) սույն թվականի սեպտեմբերի 5-ին Հանձնաժողովի աշխատակիցների կողմից կատարվել է կրկնակի այց՝ Սարալանջ բնակավայրի 1 փողոց 2 փակուղի տուն 4 հասցե՝ Սարալանջ գյուղի ջրամատակարարումը կարգավորված լինելու փաստի ուսումնասիրության նպատակով: 07:58-ից 09:08-ն ընկած ժամանակահատվածում

արձանագրվել է ջրամատակարարման տևողությունը, որից հետո՝ ժամը 09:13-ին դիտարկվել է մոտ 600մ հեռավորության վրա սահմանազատման կետում գտնվող հասցեի առևտրային հաշվառքի սարքը, ինչի արդյունքում ևս արձանագրվել է ջրամատակարարման բացակայության փաստը: Ժամը 09:27-ից սկսած Ընկերության պատասխանատուի հետ համայնքի ՕԿՋ-ում կատարվել է դիտարկում, որի արդյունքում արձանագրվել է, որ բնակավայրի թվով 3 թաղամասերից յուրաքանչյուրին ջրամատակարարումն ապահովվում է մեկական ժամով, իսկ ժամը 10:00-ի դրությամբ արձանագրվել է ամբողջ բնակավայրի ջրամատակարարման բացակայությունը, բացառությամբ՝ համայնքապետարանի դիմացի ցայտաղբյուրից, որը սնվում է ՕԿՋ-ից՝ առանձին ջրագծով,

ժա) իրականացված վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կանոնների 136-րդ կետի պահանջը, այն է՝ հրապարակված ջրամատակարարման գրաֆիկը պետք է ներառի բաժանորդին ջրամատակարարմամբ ապահովելու երաշխավորված ժամանակահատվածը: Տվյալ դեպքում Ընկերության կողմից իր պաշտոնական կայքում հրապարակված ջրամատակարարման գրաֆիկի համաձայն՝ Սարալանջ գյուղի ջրամատակարարմամբ ապահովելու երաշխավորված տևողությունը 4 ժամ է, իսկ ժամանակահատվածը՝ 08:00-ից 12:00-ը, մինչդեռ, ինչպես Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների (դիտարկումների), դրանց շրջանակում կատարված արձանագրությունների, տեսագրությունների, այնպես էլ Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված գրությունների արդյունքներով փաստվել է Ընկերության կողմից նշված գրաֆիկի խախտված լինելու հանգամանքը: Ինչ վերաբերում է վարույթի շրջանակում Ընկերության կողմից ներկայացված պարզաբանումներին, ապա դրանք չեն կարող հիմք հանդիսանալ Ընկերությանը պատասխանատվությունից ազատելու համար, քանի որ դրանցով որևէ կերպ չի հերքվել խախտումների առկայության հանգամանքը, ներկայացված պատճառաբանությունները հիմնավորված չեն, չեն բխում գործող իրավակարգավորումներից: Ընդ որում՝ ներկայացված պարզաբանումներով չի հիմնավորվել, որ նշված խախտումը հետևանք է ֆորս մաժորի, այն է՝ առկա են եղել անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են իր կամքից անկախ, խոչընդոտել են իր գործունեությանը կամ հանգեցրել համապատասխան պարտավորությունների չկատարմանը՝ հակառակ իր գործադրած ջանքերի, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի

մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը լիցենզավորված անձանց կողմից նույն օրենսգրքի, Հանձնաժողովի իրավական ակտերի պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում իրավասու է կիրառելու նույն օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցներ, վերականգնելու մինչև խախտումը եղած դրությունը, կատարելու դրանից բխող գործողություններ (այդ թվում՝ հաշվարկ, վերահաշվարկ և այլն), ինչպես նաև տալու դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ՝ հաշվի առնելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առանձնահատկությունները: Լիցենզավորված անձանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցներն են՝

1) նախազգուշացում.

2) տուգանք.

3) լիցենզիայի գործողության կասեցում.

4) լիցենզիայի գործողության դադարեցում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկից մինչև տասհազարապատիկի չափով:

Միաժամանակ, հաշվի առնելով վարչական վարույթի շրջանակում հաստատված իրավախախտման բնույթը, այն է՝ Հանձնաժողովի իրավական ակտով սահմանված պահանջի, ինչպես նաև իր իսկ կողմից սահմանված գրաֆիկով ստանձնած պարտավորության խախտում լինելու հանգամանքը, որի արդյունքում խախտվել են մի խումբ սպառողների իրավունքներ և օրինական շահեր՝ Հանձնաժողովը գտնում է, որ հետագայում Ընկերության պատշաճ վարքագիծն ապահովելու և նշված խախտումների կրկնությունը բացառելու նպատակով վերոնշյալ խախտումների համար որպես համաչափ պատասխանատվության միջոց անհրաժեշտ է կիրառել տասը միլիոն ՀՀ դրամ գումարի չափով տուգանք, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 3-րդ կետը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կանոնների 136-րդ կետի խախտման համար Ընկերությանը տուգանել տասը միլիոն դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005001343 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում և բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:

4. Սույն որոշումն սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
սեպտեմբերի 2025թ.